**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/40» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

25-ը հունվարի 2018թ.
ք. Երևան ժամը $11^{45}$

Մասնակցում էին՝

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ.Ուստյան (ԳԱՊ),

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Է. Համբարձումյան

ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պետ, գնդապետ Վ.Պապյան,

Բացակայում է՝ ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքլվացարանային ապահովման բաժանմունքի ավագ ինժեներ, կապիտան Վ. Բարսեղյան,

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Տ.Աբրահամյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/40» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Տ. Աբրահամյան)

1. Մասնակիցների՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

**1. Մասնակիցների՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Տ. Աբրահամյան)

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/40» ծածկագրով ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի շրջանակներում **առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների** կողմից իրենց որակավորման չափանիշները հրավերի պայմաններին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

-'Բլաժ' ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում բացակայում է հրավերով պահանջվող Հավելված 2-ը,

'Մասիսի 'Գարուն' կարի ֆաբրիկա' ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում բացակայում են հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրի մաս կազմող էսքիզները: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվեց մեկ աշխատանքային օրով և առաջարկվեց մասնակիցներին ՀՀ գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով շտկելու անհամապատասխանությունները: Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները:

Քանի որ 16.01.2019թ. ստացվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

1.2 29.01.2019թ Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/40» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, և վերջիններիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ նրանք ճանաչվել էին առաջին տեղ զբաղեցնող մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/40» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Տ. Աբրահամյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/29» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ) Գ. Ուստյան

Գնահատող Վ. Պապյան

Գնահատող Է. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար Տ.Աբրահամյան